ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

CORRUPTION PREVENTION COMMISSION

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ Հ/03/2020

ք. Երևան **03.03.2020թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Լ. Ալեքսանյանի, Ա. Փաշինյանի, Ն. Համբարձումյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով «Ադոնայի» իրավապաշտպան հասարակական կազմակերպության (հասցե՝ ք. Երևան, Գայի պողոտա, 2-րդ շենք, 136 տարածք, գրանցման համար՝ 211.171.1036185) և «Ագլա լոյերս» փաստաբանական ընկերության տնօրեն Սուսաննա Սարգսյանի (արտոնագիր՝ 1536), այսուհետ՝ Դիմումատու, կողմից ներկայացված դիմումը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 25-րդ հոդվածով վերապահված գործառույթները, պարզեց.

1. Դիմումատուն մի շարք պետական մարմինների, այդ թվում՝ Հանձնաժողովին հասցեագրել է դիմում՝ ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի և նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց կողմից 2013 թվականից մինչև 2019 թվականը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ներկայացված հայտարարագրերում առերևույթ սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու վերաբերյալ:

2. Մասնավորապես՝ ըստ դիմումատուի՝ Արթուր Դավթյանի հայտարարգրում արձանգրվել են հետևյալ անճշտությունները.

2.1. 18.02.2014թ. Բաձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ներկայացրած տարեկան հայտարարագրում՝ հարկային տարվա սկզբում հայտարարագրել է 10.000.000 ՀՀ դրամ, իսկ հայտարարագրի լրացման օրը 8.000.000 ՀՀ դրամ:

2.2. Հայտարարգրում նշվել է, որ հարկային տարում գույք չի օտարել, իսկ եկամուտներ բաժնում նշում է, որ 2.000.000 ՀՀ դրամ ստացել է գույքի օտարումից:

2.3. 18.02.2014թ հայտարարագրում հայտարարագրել է 11.916.277 ՀՀ դրամ եկամուտ, իսկ 05.03.2014թ հայտարարագրերում՝ 14.986.040 ՀՀ դրամ եկամուտ:

2.4. 31.01.2016թ հայտարարագրում հարկային տարվա սկզբում հայտարարագրել է 15.000.000 ՀՀ դրամ, իսկ տարվա վերջում 18.000.000 ՀՀ դրամ:

3. Այս և նմանատիպ այլ տեղեկությունների համադրման արդյունքում Դիմումատուն եզրակացրել է, որ Արթուր Դավթյանը թաքցրել է առանձնապես խոշոր չափերի եկամուտ և օտարված գույքի մասին տեղեկություններ:

4. Հիմք ընդունելով ներկայացված փաստերը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Հանձնաժողովն իրականացրել է Հայտարարատու պաշտոնատար անձ Արթուր Դավթյանի և վերջինիս ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց կողմից 2013-2019թթ. ներկայացված հայատարարգրերում հայտարարագրված տվյալների մաթեմատիկական վերլուծություն, արժանահավատության և ամբողջականության ստուգում:

5. Իրականացված մաթեմատիկական վերլուծության արդյունքում Դիմումատուի կողմից արձանագրված և մատնանշված առերևույթ խախտումները չեն հաստատվել, և Հանձնաժողովը պարզել է, որ Արթուր Դավթյանի (որպես բարձրաստիճան պաշտոնատար անձ) գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց գույքի, եկամուտների ընդհանուր հանրագումարային արժեքների միջև տարբերություններ և անհամապատասխանություններ չկան: Այսինքն՝ Դիմումատուի կողմից ներկայացված ենթադրյալ խախտման փաստը չի հաստատվել:

6. Իր նախաձեռնությամբ տվյալների ամբողջականության ստուգման արդյունքում, Հանձնաժողովը պարզել է, որ Արթուր Դավթյանը 28.03.2018թ. ներկայացրած 2017թ տարեկան հայտարարագրում որպես հարկային տարում ձեռք բերված գույք հայտարարագրել է անհատական բնակելի տուն՝ հողամասի վրա կառուցված՝ իր տնտեսական շինություններով կառույց:

7. Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման, գրանցման հիքմերը պարզելու նպատակով Հանձնաժողովը 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ Ե-022 գրությամբ հարցում է ուղարկել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, ինչպես նաև նույն օրը թիվ Ե-023 գրությամբ հարցում է ուղարկել Երևանի քաղաքապետարան՝ խնդրելով տրամադրել ք. Երևան, Աջափնյակ, Նազարբեկյան թաղամաս հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվություն, նշված անշարժ գույքի ձեռք բերման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը, այդ թվում՝ հողամասի հատկացման, ինչպես նաև դրա վրա կառուցապատում իրականացնելու թույլտվության փաստաթղթերի օրինակները:

8. 2014թ. հուլիսի 28-ին ՀՀ ք. Երևան, Նազարբեկյան թաղամաս հասցեում գտնվող 1200 քմ հողամասը դրվել է հրապարակային աճուրդի: Երևանի քաղաքապետը կայացրել է 31.07.2014թ. «Համայնքային սեփականության հանդիսացող հողերի կայացած աճուրդային վաճառքի հաղթողների հողամասեր տրամադրելու և հողամասերի օտարման պայմանագրեր կնքելու մասին» թիվ 2958-Ա որոշումը, որի հիման վրա ՀՀ ք. Երևան, Նազարբեկյան թաղամաս հասցեում գտնվող 1200 քմ հողամասը օտարվել է Սարգիս Դավթյանին:

9. 2014թ. հուլիսի 31-ին Երևանի քաղաքապետարանի կողմից ՀՀ ք. Երևան, Նազարբեկյան թաղամաս հասցեում գտնվող 1200 քմ հողամասի

աճուրդի հաղթող կառուցապատող՝ Ս. Դավթյանի բնակելի տան կառուցման համար Երևանի քաղաքապետարանի կողմից կազմվել է ճարտարապետահատակագծային առաջադրանք:

10. Երևանի քաղաքապետրանի 12.09.2014թ. թիվ 3490-Ա որոշման 1-ին կետով Երևանի քաղաքապետի 31.07.2014թ. թիվ 2958-Ա որոշումը լրացվել է 1.1 կետով, որով ՀՀ ք. Երևան, Նազարբեկյան թաղամաս հասցեի հողամասի գործառնական նշանակությունը սահմանվել է՝ որպես բնակելի կառուցապատման:

11. 2015թ. փետրվարի 27-ին Երևանի քաղաքապետարանի կողմից Ս. Դավթյանին տրվել է թիվ 01/18-Դ-206-141 շինարարության թույլտվություն՝ ՀՀ ք. Երևան, Նազարբեկյան թաղամաս հասցեում բնակելի տուն կառուցելու համար:

12. ՀՀ ք. Երևան, Նազարբեկյան թաղամաս հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ հայտարարտու պաշտոնատար անձ Արթուր Սարգսի Դավթյանի և Սարգիս Հովհաննեսի Դավթյանի սեփականության իրավունքը գրանցվել է 2017թ. մարտի 10-ին՝ որպես բաժնային սեփականություն:

13. Նշված հասցեի անշարժ գույքի կազմում ընդգրված է 4 միավոր գույք, այդ թվում՝հողամաս:

14. Արթուր Դավթյանը ՀՀ ք. Երևան, Նազարբեկյան թաղամաս հասցեում գտնվող հողամասի նկատմամբ բաժնային սեփականության իրավունքը ձեռք է բերել Սարգիս Հովհաննեսի Դավթյանի հետ 02.03.2017թ. կնքած թիվ 2700 նվիրատվության պայմանգրի հիման վրա:

15. ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի և նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց հայտարարագրերի վերլուծության արդյուքում, Հանձնաժողովը պարզել է.

15.1. Հայտարարտու պաշտոնատար անձ Արթուր Դավթյանի ընտանիքի կազմի մեջ մտնող՝ Սարգիս Դավթյանի կողմից 16.02.2015թ. ներկայացրած «2014թ. բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն, նրա հետ համատեղ ապրող ծնողին, չափահաս և չամուսնացած զավակին սեփականության իրավունքով պարկանող գույքի և եկամուտների հայտարարագրերում» տվյալ տարում ձեռք բերված ՀՀ ք. Երևան, Նազարբեկյան թաղամաս հասցեում գտնվող հողամասի վերաբերյալ տվյալները լրացված չեն: Մինչդեռ Ս. Դավթյանը պարտավոր էր նշել տվյալ տարում՝ ՀՀ ք. Երևան, Նազարբեկյան թաղամաս հասցեում գտնվող 1200 քմ հողամասը հրապարակային աճուրդով ձեռք բերելու փաստը,

15.2. 2017թ. տարեկան հայտարարգրում ինչպես Ա. Դավթյանը, այնպես էլ Ս. Դավթյանը հայտարարագրել են տվյալ տարում՝ 2017թ. ձեռք բերված մեկ միասնական գույքը (հողամաս, բնակելի տուն և այլն)՝ նշելով գույքի հասցեն, շուկայական արժեքը և բաժնեմասը,

15.3. ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի և վերջինիս ընտանիքի կազմի մեջ մտնող անձանց կողմից ներկայացված այլ հայտարարագրերում տվյալների անհամապատասխանություն չի հայտնաբերվել:

16. ՀՀ սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

17. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթը բացառող հանգամանքները» վերատառությամբ 247-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել,...հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

18. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» 2017թ. հունիսի 9-ի ՀՕ-106-Ն ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը լրացվել է «Հայտարարագրերը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով սահմանված ժամկետներում չներկայացնելը կամ հայտարարագրերի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելը կամ հայտարարագրերում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը» վերատառությամբ 169.28-րդ հոդվածով:

19. 2017թ. օրենսդրական փոփոխությունների արդյունքում Վարչական իրավախախտում (զանցանք) է համարվել հայտարարատուի կողմից հայտարարագիրն օրենքով սահմանված ժամկետում Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով չներկայացնելը կամ համապատասխան պահանջների կամ կարգի խախտմամբ ներկայացնելը կամ հայտարարագրված տվյալը սխալ կամ ոչ ամբողջական ներկայացնելը:

20.Հաշվի առնելով, որ Սարգիս Դավթյանի կողմից 2014թ. գույքի և եկամուտների տարեկան հայտարարգրում ՀՀ ք. Երևան, Նազարբեկյան թաղամաս հասցեում գտնվող հողամասի վերաբերյալ տվյալներ չլրացնելու պահի դրությամբ ՀՀ օրենսդրությամբ հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ լրացնելը չի հանդիսացել **վարչական իրավախախտում** (չկա վարչական իրավախախտման դեպքը), ինչը վարչական իրավախախտման վերաբերյալ գործի հարուցումը բացառող հանգամանք է, Հանձնաժողովը վարչական վարույթ չի հարուցում:

21. Միաժամանակ, Հանձնաժողովը գտնում է, որ Սարգիս Դավթյանի կատարված արարքում առերևույթ առկա չեն հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու կամ հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելու հատկանիշներ, քանի որ նշված անշարժ գույքի տվյալները, որը իր ամբողջության մեջ ներառում է նաև հողամասը, ՀՀ գլխավոր դատախազ Ա. Դավթյանի հայրը՝ Ս. Դավթյանը ներառել է իր 2017թ. գույքի և եկամուտների տարեկան հայտարարգրում՝ որպես բաժնային սեփականություն:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **ԱՐԱՄԱՅԻՍ ՓԱՇԻՆՅԱՆ**

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ